

891.99

---

4-24

7764

7765

7766

7767

7768

7769

XV 1/2 9

10,546. 9/11  
10,546. 1/1.


84-3

7-48

# ՓՈՔՐԻԿ ԼՐՏԵՍ

(ԱՆՓՈՆՍ ԳՕԳԵԻՑ)

1004  
15138



105

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ  
ՏՊԱՐԱՆ Ի. Ն. ՍԿՕՐՕՒՐԿՈՒԿ  
1890.

2060

Дозволено цензурою. С.-Петербургъ, 19 апрѣля 1890 года.

Типографія И. И. Сгогохова (Надеждинская, № 43).

Նրան կոչում էին փոքրիկ Ստեննո: Սա Պարիզի իսկական զաւակն էր: Նիհար ու դունատ, նա տեսքով կ'լինէր տասն կամ տասնուհինգ տարեկան. փոքրիկ Ստեննոն այնպիսի տղայ էր, որի տարիքը ճշտութեամբ որոշել շատ դժուար էր, և մինչև անգամ անկարելի: Նրա մայրը մեռած էր: Օերունի նաւաստի հայրը՝ Տամբլ կոչուող թաղի քաղաքային զբօսարանի ծառան էր: Փոքրիկ երեխաները, ծծմայրները, պառաւները, խեղճ աշխատաւոր մայրերը, մի խօսքով՝ այն ամենքը, որոնք կառքերի տակ մնալու վտանգից ազատուելու համար ապաստանում էին այս զբօսարանի ճեմելիքներում ամենքն էլ ճանաչում էին Ստեննոյի հօրը և սիրում: Ա-

մենքը լաւ զիտէին՝ որ չ'նայած նրա դաժան և կոշտ դէմքին, նա ունէր շատ բարի և ազնիւ հոգի. յաճախ նրա դէմքին փայլում էր մայրական քաղցր ժպիտը, մանաւանդ երբ խօսքը նրա փոքրիկ Ստեննոյի մասին էր լինում, կամ թէ հարցնում էին ծերունուց.

— Ի՞նչպէս է ձեր փոքրիկ որդու առողջութիւնը:

Ծերունի Ստեննօն շատ սիրում էր իւր որդուն և իրան բազմաւոր համարում: փոքրիկ Ստեննօն սովորում էր ուսումնարանում: երեկոները, դասերի վերջանալուց յետոյ, ծերունին զնում էր որդու յետևից և նրանք միասին պտտում էին ճեմելեքներով՝ կանգ առնելով իւրաքանչիւր նստարանի մօտ. բարևում էին սովորական յաճախողներին և ընդունում նրանց բարևը:

Վժբազգաբար Պարիզի պաշարման սկըգբից արդէն ամենբան փոխուել էր:

Փոքրիկ Ստեննոյի հօր զբօսարանը փակել էին և դարձրել զինարան. իսկ խեղճ ծերունուն նշանակել էին պահապան: Սա անքուն հսկում

էր զբօսարանին և ամբողջ օրն անցկացնում դարտակ ճեմելեքներում: իսկ իւր որդուն միայն երեկոյեան ուշ տանն էր տեսնում:

Իայց արժէր նայել նրա դէմքին պրուսացիների մասին խօսելիս...:

Փոքրիկ Ստեննօն շատ էլ դժգոհ չէր իւր նոր կեանքից:

Պաշարո՞ւմն. սա մի զուարճութիւն է երեխաների համար: Այդ ժամանակ ուսումնարանները փակուած են լինում: կ'նշանակէ դաս չ'կայ: Շարունակ արձակուրդ է. փողոցները նմանում են բազարի...: Արեխան ամբողջ օրը առաւօտուց մինչ երեկոյ թափառում էր քաղաքում: Սա ուղեկցում էր տեղական զօրքերին, որոնք զնում էին պաշտպանելու այդ գէպքում նա զերադասում էր աւելի լաւ նուագող զունդը. սրանում փոքրիկ Ստեննօն շատ հմուտ էր:

Սա կարող էր պատմել ձեզ, որ 96-րդ գնդի երաժշտութիւնը բանի պէտք չէ. իսկ 55-րդինը՝ հիանալի է:

Արբեմն նա զնում էր զինուորների զինա-

խաղին նայելու: Առաւօտները, զամբիւղը կռան տակ առած մտնում էր այն մարդոց շարքը, որոնք շտապում էին մտի և հացի խանութները:

Այնտեղ լճակի մօտ, երեսխաները ծանօթանում էին իրար հետ և խօսակցում քաղաքականութեան մասին, և նրանից, ինչպէս ամենքին յայտնի Ստեննոյի որդուց, հարցնում էին կարծիքներ: Բայց աւելի զուարճալին նրանց «գալօ» կոչուող խաղն էր, — այն նշանաւոր խաղը, որը Պարիզի պաշարման ժամանակ իբրև նորութիւն մտցրել էին բրետոնական զինուորները:

Նրբ որ փոքրիկ Ստեննօն չէր լինում ո՛չ խրամի, ո՛չ հացթուխի մօտ, նրան անպատճառ կարելի էր գտնել Շատօ-գոյի հրապարակում «գալօ» խաղացողների մօտ: Ենքն ըստ ինքեան հասկանալի է, որ նա խաղին չէր մասնակցում: Դրա համար փող էր հարկաւոր: Նա միայն բաւականանում էր խաղացող ընկերներին նայելով: Խաղացողներից մէկը, բարձրահասակ, կապոյտ բլուզով, որը հէնց էն էր շա-

րունակ հինգ Ֆրանկանոցներ էր դնում, առանձնապէս գրաւում էր նրա ուշադրութիւնը: Նրբ որ այդ բարձրահասակ տղան վաղվզում էր, փողերը հէնց էն էր զնգ զնգում էր նրա դրպաններում: Մի անգամ վերցնելով այն դրամը, որը զլորուեց փոքրիկ Ստեննոյի ոտների տակ, բարձրահասակ տղան կամացուկ ասաց նրան. —

— Հը, ի՞նչ է, աչք ունես դրա վրայ...:

Նթէ ուզում'ես, ես քեզ կ'ասեմ թէ որտեղ կարելի է ճարել դրանից:

Նրբ որ խաղը վերջացաւ, բարձրահասակ տղան մի կողմ ամբարւ փոքրիկ Ստեննոյին և առաջարկեց զնալ միասին լրագիրներ ծախելու պրուսացիներին, որոնց համար ամեն անգամ վճարում են երեսունական Ֆրանկ: Այդպիսի առաջարկութիւնը սկզբում շատ զայրացրեց փոքրիկ Ստեննոյին, և նա երեք օր շարունակ չէր գնում խաղացողների մօտ: Այդ օրերը նրա համար անտանելի էին: Պիշերները նրա աչքի առաջ պատկերանում էին հինգ Ֆրանկանոցներն ու «գալօ» խաղը, և թւում

նրան, թէ այդ փայլուն փողերը գլորուում էին նրա անկողնակալի տակ:

Այն աստիճան յափշտակուել էր նա, որ չհամբերեց ու չորրորդ օրը դնաց Շասո-դոյի հրապարակը, տեսաւ այն ընկերին և ենթարկուեց գայթազութեան:

Առաւօտ էր. ձիւնը ծածկել էր գետինը. երբ նրանք ճանապարհ ընկան, ուսերին ունէին տոպրակներ, իսկ լրագիրները թագցրել էին բլուզի տակ: Ղեռ նոր էր սկսել լուսանալ, երբ նրանք հասան Ֆլանդրեան դռների մօտ: Բարձրահասակ տղան բռնեց փոքրիկ Ստեննոյի ձեռից և մօտենալով քաջ ու բարի դէմքով ծերունի պահապանին աղքատի նման մղկտաց.

«Թոյլ տուէք մեզ անցնել, բարի ծերունի...», մեր մայրը հիւանդ է, հայրներնիս մեռած. ես՝ իմ փոքր եղբորս հետ գնում եմ դաշտը մի փոքր գետնախնձոր հաւաքելու»: Նա լաց էր լինում. իսկ փոքրիկ Ստեննոն ամօթից գլուխը կախ էր ձգել: Ծերունի պահապանը նայեց նրանց, յետոյ անապատ փոշիոտ ճանապարհի վրայ և վերջապէս ճանապարհ տալով ասաց.—

«անցէք շուտով»: Նրանք դուրս եկան օբերվիլէան ճանապարհը: Բարձրահասակ տղան ծիծաղում էր: Ինչպէս երազում, փոքրիկ Ստեննոն տեսաւ զործարանները զինանոցների փոխած, կոտրած իրեր, որոնց վրայ փռած էին թայփալասներ և երկար ծուռ ու մուռ խողովակներ, որոնք առաւօտեան մառախուղի միջով կարծես ձգուում էին դէպի երկինքը: Նրեխաներն երբեմն պատահում էին մօռտակի մէջ փաթաթուած պահապաններին և սպաներին. որոնք հեռադիտակներով զննում էին շրջակաները:

Այստեղ այնտեղ շինել էին վրաններ, որոնք ծածկուած էին՝ հազիւ հազ վառուող խարոյկի տաքութիւնից հալուող ձիւնի շերտով:

Բարձրահասակ տղան իմանում էր ճանապարհը ու դաշտով էր գնում, որպէս զի չհան դիպին զիշերապահներին: Չ'նայած այդ նախազուշութեան, այնուամենայնիւ, նրանք հանդիպեցին կամաւոր զինուորների մի մեծ զնդի: Ամամուր զինուորները փաթաթուած իրանց

վերարկուններում այստեղ դարան էին մտել փոսի մէջ, որը լցուած էր ջրով և ձգուած ամբողջ Սուասոնեան երկաթուղու երկարութեամբ:

Այս անգամ բարձրահասակ տղան ի զուր էր գործ դնում իւր սովորական լացախառն մղկտոցը. զինուորները նրանց չ'էին թողնում անցնել: Բայց հէնց այդ միջոցին, երբ նա լաց էր լինում, հարեան գիշերապահի տնակից երևաց ճանապարհի վրայ ալևոր ծերունի, որը շատ նմանում էր Ստեննոյի հօրը:— Սա այստեղի ենթասպան էր:

— «Հը, փոքրիկներ, բաւական է ձեզ լաց լինելը»—ասաց նա,— ձեզ թոյլ կ'տան գնալ գետնախնձորի բայց առաջ մի մտէք ու տաքացէք մի փոքր: Ահա՛, այդ փոքրիկ տղան բոլորովին սառել է ցրտից»:

Բայց ո՛չ, փոքրիկ Ստեննոն դողում էր ո՛չ թէ ցրտից, այլ՝ երկիւղից ու ամօթից... Պահապանի տնակում նրանք տեսան միքանի զինուորներ, որոնք տաքանում էին թէ՛ կրակի առաջ և չորացնում սառած պաքսիմատները

սուխների վրայ հազցրած: Տեսներով երեսաներին, տեղ սուխն նրանց, և ապա առաջարկեցին սուրճ: Երեսաները երբ որ սուրճ էին խմում, դռների մօտ երևաց մի սպայ, դուրս կանչեց ենթասպային, փսիսաց նրա ականջին ու շուտով հեռացաւ:

— «Տղէ՛րք» ծիծաղելով ասաց ենթասպան... «այսօր պիտի լինի տաք... մենք իմացանք պրուսացիների պայմանական խօսքը...: Ես կարծում եմ, այս անգամ մեզ կ'յաջողի խել նրանցից այդ անիծեալ Բուրժէն»: Այս խօսքի վրայ սկսեցին ծիծաղել և աղաղակել, պարել ու երգել: Արում էին սուխները, իսկ երեսաները օգուտ քաղելով այդ յանկարծ բարձրացած աղմուկից ու շփոթութիւնից, իսկոյն դուրս թռան տնակից: Խրամի յետևում ձգւում էր մի հարթ տարածութիւն, — իսկ դրա խորքում — երկար, սպիտակ պատ:— Հէնց այդ պատի մօտովն էր նրանց ճանապարհը: Ժամանակ առ ժամանակ նրանք կանգ էին առնում, ցոյց տալու համար, իբր թէ գետնախնձորեն հաւաքում:

— «Աւերադառնանք, չ՛գնանք այնտեղ»,  
ասաց փոքրիկ Ստեննօն: Այդ խօսքի վրայ  
ուսերը վեր քաշեց նրա ընկերը և երկուսն էլ  
դարձեալ առաջ գնացին: Յանկարձ նրանք լսե-  
ցին, որ մօտիկ մի տեղ հրացաններ են լեցնում:

— «Պառկի՛ր», ասաց բարձրահասակ տղան.  
փռուելով գետնի վրայ: Նա պառկեց ու  
շուռացրեց. նրան պատասխանեցին նոյն շուռ-  
ցով: Յետոյ ձիւնի վրայով սողալով, նրանք առաջ  
ընկան: Պատի դիմաց, գետնի հաւասարութեամբ  
երևացին դեղին կոշտ բեխեր և ապա՝ աղտոտած  
զլխարկ: Բարձրահասակ տղան դուրս թռաւ  
խրամի մէջ և կանգնեց պրուսացու կողքին:

— «Սա իմ փոքր կղբայրս է», ասաց նա  
ցոյց տալով փոքրիկ Ստեննոյին: Ստեննօն այն-  
քան փոքր էր, որ պրուսացին, տեսնելով նրան,  
ծիծաղեց, և որպէս զի անց կացնէ թումբերի  
վրայով, նա ստիպուած էր խտտել նրան. Պա-  
տի միւս կողմում ձգուած էին երկար հողա-  
կոյտեր, ընկած էին կտրած ծառեր, իսկ ձիւնի  
մէջ շինած սև ծակերից դուրս էին ցցուած  
միւկնոյն դեղին կոշտ բեխերը և աղտոտած

զլխարկները: Պրուսացիները, տեսնելով անցնող  
երեխաներին, ծիծաղում էին: Մի կողմում  
գտնուում էր այգեպանի տնակը, շրջապատած մեծ  
ծառերով. նրա ներքին յարկը բռնած էին զին-  
ուորները, որոնք թուղթ էին խաղում, խօսում  
և միւկնոյն ժամանակ ապուր եփում թէժ կրա-  
կի վրայ: Նրանց ապուրից տարածւում էր  
ամեն կողմ կաղամբի ու ճարպի հոտը: Պրու-  
սացի պահապան զինուորները զանազանում  
էին կամուրաններից:

Տան վերին յարկում ապրում էին սպաները:  
Այնտեղից լսում էին նուազարանի և շամ-  
պանեան զինու խցերի ձայնը: Տեսնելով Պա-  
րիզի երեխաներին ուռա՛ կանչեցին, իսկ եր-  
բոր նրանք տուեցին լրագիրները, այն ժամա-  
նակ առաջարկեցին նրանց զինի ու ստիպե-  
ցին պատմել:

Ներկայ ելող սպաները հպարտ և դաժան  
դէմք ունէին, բարձրահասակ տղան զուար-  
ճացնում էր նրանց իւր փողոցային կատակնե-  
ներով և օտարոտի բարբառով: Նրանք կրկնե-  
լով նրա խօսքերը՝ ծիծաղում էին և ուրա-

խուժեամբ լեզ տալիս Պարիզի այդ աղտի մէջ, որը բերում էին նրանք, իբրև նորութիւններ: Փոքրիկ Ստեննօն ցանկանում էր նոյնպէս խօսել և ցոյց տալ նրանց, որ ինքն ևս յիմար չ'է. բայց մի բան նրա լեզուն կարծես կապում էր:

Նրա դիմաց կանգնած էր մի պրուսացի, որը ամենից մեծն էր և միւսերից աւելի լուրջը: Նա ձեռքում բռնած էր լրագիրը և ցոյց էր տալիս որ իբր թէ կարգում է, բայց իսկապէս նա աչքերը յառած էր Ստեննոյի վրայ: Նրա հայեացքը արտայայտում էր թէ քնքշութիւն և թէ յանդիմանութիւն:

Պարծես նա մտաբերում էր իւր որդուն, որը գտնուում էր հեռու՝ Հայրենիքում, Ստեննոյին հասակակից, և կարծես ինքն իրան ասում էր.

— «Նս աւելի կ'զերադասէի մեռնել, քան թէ տեսնել որդուս այդպիսի մի խայտառակ արհեստով պարապելիս»:

Եյդ բոպէից զգաց փոքրիկ Ստեննօն՝ որ կարծես մի ծանր բան սկզմում էր նրա կուրծքը ու դժուարացնում նրա շնչառութիւնը:

Եյդ ծանր զգացմունքը մոռացութեան տալու համար՝ նա սկսեց զինի խմել:

Շուտով ամեն բան մթնեց նրա աչքերում:

Նա լսում էր, ինչպէս երազում, իբրև թէ բարձրաձայն ծիծաղում էր իւր ընկերը ազգային հեծելազօրքի, նրանց զինաստղի և զիշերուայ շփոթութեանց վրայ: Բայց, ահա, բարձրահասակ տղան իջեցրեց ձայնը, սպաները մօտեցան նրան. նրանց դէմքերը լուրջ դիրք ընդունեցին: Անպիտանը պատրաստուում էր նախազգուշացնել նրանց Ֆրանսիական կամաւոր զինուորների յարձակումից:

— «Հարկաւոր չ'է», ասաց նրան փոքրիկ Ստեննօն, «հարկաւոր չ'է այդ... ես չ'եմ ուզում...»:

Իսկ ընկերը ծիծաղեց նրա վրայ և շարունակեց պատմել:

Հաղել նա կարողացաւ վերջացնել իւր պատմութիւնը, ինչպէս բոլոր սպաները վերկացան, և նրանցից մէկը, մատով ցոյց տալով դուռը ասաց երեխաներին՝—դուրս կորէք»:

Սպաները սկսեցին վռազ վռազ դերմաներէն խօսակցել միմեանց հետ: Բարձրահասակ

տղան հպարտ հպարտ դուրս եկաւ ճնկճնկաց-  
նելով փողերը, իսկ փոքրիկ Ստեննոն գլուխը  
կախ գցած, գնում էր նրա յետևից: Պրու-  
սացու մօտից անցնելով, որի հայեացքն այնքան  
հարածում էր նրան, կարծես թէ լսում էր մի  
ազեապի ձայն, որն ասում էր նրան.

— «2է. այդ լաւ բան է՛... Արաստուքի  
կաթիլները երեացին փոքրիկ Ստեննոյի աչքե-  
րում: Երեխաները դուրս գալով՝ սկսեցին վա-  
զել դաշտով և շուտով հասան իրանց տեղը:

Առանց արգելքի գեանախնձորի տոպրակ-  
ները ուսերին անցան նրանք կամաւոր զենուոր-  
ների մօտով: Այնտեղ պատրաստուում էին զի-  
շերային յարձակման: Չօրքերը լուռ անցնում  
էին ու խմբուում պատնէշների յետևում:

Օերունի ենթասպան նոյնպէս այդտեղ էր:  
Նա կարգաւորում էր իւր զինուորներին և ու-  
րախութիւնը փայլում էր նրա դէմքի վրայ:  
Երբ երեխաներն անցան նրանց մօտով, նայեց  
նրանց յետևից ու ժպտաց...:

Աւանդ, որքան ցաւ ու տանջանք պատճա-  
ւեց փոքրիկ Ստեննոյին այդ ժպիտը:

Նա կամենում էր ազազակիլ ու ասել, մի՛  
գնաք այնտեղ, մենք ձեզ մատնել ենք...:

Բայց ընկերն ասաց նրան. «Եթէ դու յայտ-  
նես» մեզ իսկոյն կ'սպանեն»:

Մահուան երկիւղը զսպեց նրան: Աուր-  
նեվում նրանք մի դարտակ տուն մտան և փո-  
ղերը բաժանեցին իրար մէջ: Պէտք է ասել, որ  
փողերը ազնուաբար բաժանեցին. երբ որ փոք-  
րիկ Ստեննոն լսում էր փողերի ճնկճնկոցը

1004  
75138

իւր գրպաններում և մտածում «դարձ» խաղի  
մասին յանցանքն այնքան ծանր էր թւում:  
Բայց երբ ընկերից բաժանուելով միայնակ մնաց,  
զործած յանցանքն աւելի ևս սկսեց տանջել  
նրան: Արծեա ամբողջ Պարիզը փոխուել էր:  
Անցուդարձ անողները խիստ հայեացք էին  
ձգում նրա վրայ և կարծես նրանք գիտէին՝  
թէ նա որտեղից է գալիս: «Մասնից» խօսքը  
ամեն կողմից բաղխում էր նրա ականջը:

Այերջապէս տուն վերադարձաւ նա և տես-  
նելով՝ որ հայրը տանը չէ, հանգստացաւ:

Արագութեամբ մտաւ նա իւր սենեակը և  
սկսեց թագցնել բարձի տակ փողերը, որոնք

այնքան տանջում էին նրան: Փոքրիկ Ստեննոյի հայրը երբէք այնքան բարի և ուրախ չէր եղել, ինչպէս այդ երեկոյ: Պաւառներից ստացուած լուրերը հաղորդում էին, որ գործերը լաւ են գնում. ընթրիքի ժամանակ ծերունի զինուորը նայեց պատից կախած հրացանին և ուրախ ժպտով ասաց իւր որդուն

— «Հը, տղաս, եթէ մեծ լինէիր, դու էլ կ'երթայիր պրուսացիների դէմ»:

Ժամի ութին որտաց թնդանօթը: «Սրանք օբերվելցիներն են... կուում են բուրժում», ասաց նա, որովհետեւ՝ ինչպէս իւր ձեռքի հինգ մատերը, զիտէր բերդի բոլոր ծակ ու ծուկերը: Այս խօսքի վրայ փոքրիկ Ստեննոյի գոյնը թռաւ. զնաց քնելու, իբր թէ յոգնել է: Բայց քունը չէր գալիս: Թնդանօթը շարունակ որոտում էր: Արիժես նա տեսնում էր թէ ինչպէս կ'ամաւոր զինուորները յարձակուումեն պրուսացիների վրայ և ինչպէս ընկնում են դարանի մտած զօրքի ձեռքը: Այս մտաբերում էր նա իրան ժպտող կնիթասպային, պատկերացնում էր

նրան ձիւնի վրայ արեան մէջ թաւալուած, և նրա հետ միասին ընկած ուրիշ շատերին...:

Ահա այդ բոլոր ընկածների արեան զինը թաղցրած էր այնտեղ նրա բարձի տակ, և արել էր նա,—ծերունի Ստեննօ զինուորի որդին...: Արտասուքը խեղդում էր նրան, նա լսում էր, հարեան սնեակում ինչպէս ման էր գալիս հայրը և ինչպէս բաց էր անում լուսամուտը: Ներքեում հրապարակի վրայ հաւաքուում էին զինուորները: Ամաւոր զինուորների գունդը պատրաստուում էր արշաւանքի: Խեղճ երեսան չէր կարողանում զսպել իւր հեկեկանքը՝

— «Խնչ է պատահել քեզ», հարցրեց Ստեննոյի հայրը, մանելով նրա սնեակը:

Նրեխան չ'կարողացաւ այլ ևս զսպել իրան, թռաւ անկողնուց և չոգեց հօր առաջ: Հագիւ կարողացաւ նա շարժուել տեղից, իսկոյն բոլոր փողերը թափուեցան յատակի վերայ:

— «Խնչ փողեր են դրանք, դու գողացել ես», ասաց ծերունին, դողալով ամբողջ մարմնով:

Այն ժամանակ միանգամից, առանց կանգ առնելու, փոքրիկ Ստեննօն պատմեաց բոլոր ի-



րողութիւնը հօրը: Վանի պատմութիւնը, նա, այնքան թեթեւ էր զգում իրան: Մարտափոփ լսում էր նրան ծերունի Ստեփաննոս, երբ խոսուածնանքը վերջացաւ, նա ձեռքերով ծածկեց երեսը և սկսեց հեկեկալ:

— «Հայրի՛կ, հայրի՛կ»... ուզում էր անել երեխան:

Բայց ծերունին հրեց նրան իրանից, առանց պատասխան տալու: Հաւաքեց նա փողերը յատակից և հարցրեց:

— «Մա՞ է բոլոր փողերը»: Փոքրիկ Ստեփաննոս զլխով արեց: Ծերունին վերցրեց հրացանը, վառօդամանը և փողերը զրպանը դնելով ասաց. «Աւա, ես այս փողերը կ'վերադարձնեմ պրուսացիներին»:

Աւա չ'ասելով այլ ևս ոչ մի խօսք, մինչև անգամ չ'նայելով այն կողմը, որտեղ դռնուում էր փոքրիկ Ստեփաննոս, նա դուրս եկաւ փողոց ու միացաւ արշաւանքի զնացող զօրքին...: Այն օրից այլ ևս չ'երևցաւ ծերունի Ստեփաննոս.

4764-4769

2013

